ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18.08.2023 թվականին կնքված **N ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11** գնման պայմանագրի

ք. Երևան

«18» օգոստոսի 2023թ.

ՀՀ գիտության կոմիտեն, ի դեմս տնօրենի Լ. Ֆարմանյանի, ով գործում է Կոմիտեի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Թադևոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 18.08.2023թ. կնքված **N ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրով սահմանված «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի սպասարկող բանկը և բանկային հաշվեհամարը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ 1570011489540100:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
ՀՀ գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033124
ՀՎՀՀ 02704199

գլխավոր քարտուղար----------Լ. Ֆարմանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն
ք.Երևան, Արզումանյան 32-10
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն---------- Բ. Թադևոսյան
/ստորագրություն/
Կ.Տ